Ը. ՏԱՐԻ 2254 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 14 ՀՌՈՏԻՑ 4383 20 ՅՈՒԼԻՍ 1891 26 ԶԻԼՀԻՃՃԷ 1308 ՇԱԲԱԹ

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան գանձման արժեք | 150 |
| » Վեցամսեայ » | 75 |
| » Եռամսեայ » | 40 |
| Օտար երկիրներու Տարեկան Ֆրանք | 56 |
| » Վեցամսեայ | 28 |
| Ընթեր թուղթին վրայ ծանուցման տողը. Տարեկան Օսմ. Ոսկի | 2 |
| Գաւառաց Թղթակցաց համար միացիական | Ղրշ. 50 |

Խմբագրութեան հասցէ ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Արեւելքի ներկայ համարը, բաց ի իր սովորական նիւթերէ, կը պարունակէ նաեւ հետեւեալ յօդուածներ.

ԳՐԱԿԱՆ. ՔԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ (կենսագրութիւն Ռումանիոյ Թագուհւոյն). Թ. ԹԵՐԶԵԱՆ

ՀԱՅ ՄԻՏՔՆ Ի Ե. ԴԱՐՈՒ. Բ. ՔԷՉԵԱՆ

ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ, (Յօրինեալ ի Խ. Ե. Վահանւոյ.) Յ. ԳՈՒՐԳԷՆ

ԾՈՎՈՒՆ ՍԻՐԱՀԱՐԸ. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԵՐԴՄԱՆ ՀԱՐՑԸ. (Խմբագրական «Մշակ»ի) Գ. Ա.

ԾԵՐՈՒՆԻ ԵՐԳԻԶԸ (Փշուր ժողովրդական երգոց). Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՔ. ՔԻՄԻԱՍԷՐՆ

Կը յիշեցունենք «Արեւելք»ը ձեռքէ գնողներուն որ չմոռնան ներկայ թերթին հետ լրագրավաճառէն պահանջել նաեւ յաւելուածը որ անջատ թուղթի վրայ տպուած է։ Ամբողջին գինը 40 փարայ։

Կ. ՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 20|1 ՕԳՈՍՏ. 1891

# ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Առաջիկայ շաբթուն Ազգային Ժողովը պիտի գումարի, նոր Քաղաքական Ժողովոյ ընտրութեամբ ամբողջացնելու համար Ազգային Վարչութեան վերակազմութիւնն, որ սկսած էր անցեալ ուրբաթ, Կրօնական Ժողովոյ ընտրութեամբ։ Այս գործողութիւն կ'երեւի թէ աշխատալից պիտի լինի. [illegible]

[illegible]

...չութեան պետը Ս. Պատրիարք Հայրն է, բայց գործնականի մէջ Քաղաքական Ժողովոյ ատենապետին անձնաւորութիւնը մեծ դեր մը կը կատարէ, այնպէս որ Քաղաքական Ժողովը ողջոյն [illegible]

[illegible]

—)( 8 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

# ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

## ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԱՆԶԿՈՒԹԵԱՆՑ ՏՈՒՆԸ

Երբ տասը Ֆրանքն հատաւ, Թաղապետութեան դիմեց՝ յուսալով որ նորէն պիտի օգնէին իրեն։

Երեք Ֆրանք դրին ձեռքը։

[illegible]

## ԾՈՎՈՒՆ ՍԻՐԱՀԱՐԸ

Թէրզեանի վարդերանգ գրուածոյն աւելնթեր, ուր կը խօսի Թագուհի-գրաքնէտի մը վրայ, նկարագրել հայ գրագէտ մը՝ որ անուաղութենէ կը տառապի, ...

Բայց մեղքն այն գլուած էն է, — եթէ ...

...

Այս ոտանաւորին մէջն ալ, ինչպէս իր ամէն գրուածոյ մէջ, ծովն եղած է իւր մեծ ներշնչողը։ Քանի մը օր առաջ Հիւանդանոց փոխադրեր են զինքը։ Ի՛նչ մեծ շնորհ մը պիտի ըլլայ, եթէ ծովահայեաց խուց մը տային Գարեգին Երամեանին, այդ ծովու սիրահարին։ Թերեւս ապրի։

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

---

## ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

### ՅՕՐԻՆԵԱԼ

### Ի Խ. Բ. ՎԱՀՈՒՆԻՈՅ

### 1888

Գործն ամբողջ բաղկացեալ է երկու մասէ։ Առաջին մասին մէջ, իբր 200 ե...

...

...հոյ գրութեան, գովելի աշխատութիւն, որ արժանի է քաջալերութեան. ազգային մատենագրութեան բեղմնաւոր անդոց մէջ շատ բան է ճաշակած, թէեւ սակաւ ինչ լինի մարսած. իւր գիտողութիւնք եւ խորհրդածութիւնք, թէեւ յաճախ մթին և անյօդ, թէպէտ ոչ դուն ուրեք պատմական ու գրական կերպ կերպ անճշդութեամբք խառն, այլ են բազմակողմանի և արդիւնք երկարատեւ խուզարկութեանց. Ջանացած է բազմադիմի ծանօթութեամբք, որ չեն անծմուտ մըտաց գործ, ջատագով լինել իւր վարդապետութեան, և ազգի ազդի հնարիւք շուրջանակի պատսպարութիւն մը յարդարել ի նպաստ իւր սկզբանց կամ՝ ըստ իս՝ դժբախտաբար ճախող ձեռնարկութեան մը։

Ի տեսականին՝ այսչափ ինչ բաւական լինի ըսել առաջիկայ գործոյն վրայ։ Իսկ գալով գործնականին՝ ունիմ ինչ ինչ դի...

...

...գործն, գէ՛թ բաղում մասամբք. Իզմիրեանց կտակի Պատ. Յանձնաժողովոյ նկատողութեան, թէեւ արգոյ յօրինիչն արժանի լինի խրախուսանաց, որպէս կը կարծեմ։

Յ. ԳՈՒՐԳԷՆ

1 մայիս 1891
յՕրթաքէօյ

---

## ԾԵՐՈՒՆԻ ԵՐԳԻՉԸ

Օ՜ հանէս տէտէն, վաթսուննն անցուցած ծերունի մը, շատ անգամ տեսած ենք զինքը։ Եզնէյքի ծնած է, օր մը իր գիւղին համար տանը ներկայացուցիչն եղած՝ աշխարհի գիժ փորձութեանց հանդիպելով՝ կորուսած է կայք և գոյք, պատրոյգ և իւղ՝ սպառած ելած է նոր բաղդ ու նոր բան փնտռել Պոլիս և այլուր, այսպէս սակայն իր կորուսած տանն ու արտերու սահմանէն դուրս երկար թափառելէ յետոյ ոչինչ կրցած է անձին ու համբաւին դարման բերել, միշտ լինկած, միշտ կարօտ, 15-20 տարիներէ ի վեր մանաւանդ շրջիկ մուրացիկներու ամենէն արգահատելին, խեղճ մարդը ընտանեաց միակ ու վերջին մնացորդը կը մնայ։

Անցեալ կիրակէ օր դարձեալ հանդիպեցանք, դեռ առաւօտ, ժամի դռնէն դուրս ելած՝ փողոցի զով շուքին տակ շունչ կ'առնէր։ Մօրուքն աղեբէկ ու փտտած յարդի գոյն, փոքրահասակ, գի...

...

...մութիւններ գիտէ, որոց ու նահատակներու անուանք համբիչի հատիկներու պէս կը թուարկէ, սաղմոս, շարական քան մեր վարդապետները լաւ եւ ուղիղ կ'արտասանէ հայկական կատարեալ հնչմամբ ու առոգանութեամբ։

Այս անգամ ժողովրդական երգերու ալ փշուրը ծերունոյն երգածներէն օրինակեցի սիրահարի փոթորկալից դէպքեր ալ անցուցած է եղեր, խոստացաւ որ օր մ'ալ անոնցմէ պատմել. ահա մեր ալ աշուղը այլքատ լքեալ. աննշան սոսէր մը. Լոնտոնի ու Փարիզի կեանքէն ձանձրացողներուն արտակարգ ճաշակ մը։

Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

21 յունիս, 91, Խարբերդ

